

խոցող գեղարդին վրայ շինուած շարականէն, ուր կ'ըսուի. «Ուրախ լեր ամենուրեք օրհնեալ ծաղիկ, որ մխեցար յարիւն Տեառն մերոյ Յիսուսի, եւ կտրեցան արմատք ախտից եւ ցաւք մեղաց: Քեւ ցուցաւ մեզ խաչեցեալն՝ Աստուծոյ եւ Տարբ ստոյգ եւ կենդանի*»:»

Նոյնպէս արեւելեան հայ եկեղեցին կը նշովէ զԵւտիքէս եւ անոր հետեւողները, եւ զանիկայ հերետիկոսաց մէջ կը դասէ: Այլ եւ ամէն ընդհանուր սիւնհոգոսները կ'ընդունի, բաց ի չորրորդէն, ինչպէս որ Հայոց Վաթողիկոսն Յովհաննէս 1848ին Ռուսաց Նիկողայոս կայսեր գրած թղթոյն մէջ կը դաւանի³:

Արեւելեան Հայք ունին շատ հին պատարագամատոյց, զոր Հայոց Առաքեալն Ս. Գրիգոր Լուսաւորիչ լրացուցած է եւ զայն մինչեւ ցայսօր կը գործածեն. ասիկայ Սահակ, Մեսրոպ, Գիւտ եւ Մանգակունի Վաթողիկոսներն ամբողջացուցած են⁴, եւ Ս. Բարսղի եւ Յովհ. Ոսկեբերանի պատարագամատուցին շատ նման է: Հայոց հաւատոյ հանգանակն որթողոքս եկեղեցւոյ հանգանակին հետ նոյն է⁵ առանց «եւ

* Այս աղաւաղեալ վկայութեան քննադիրն հետեւեալն է՝ ըստ Շահաթունեանցի, (Ստորագրութիւնն Կաթ. Էջմիածնի, յԷջմիածին 1842, Հտր. Ա. էջ 49) «...Գեղեցիկ գոյն գովելի ներկեալ արեամբն Յիսուսի...: Աստուածամուխ սուսերդ աստուածախառն զօրութեամբ՝ որով կտրին արմատք ախտից եւ ցաւք մեղաց եւ յանցանաց...: Գեղապաճոյժ Գեղարդն սուրբ եւ թարգմանիչ անմահ՝ Որդւոյն, որով ցուցաւ Աստուած եւ մարդ՝ ըստոյգ մեռեալ եւ կենդանի՝ յոր հաւատաց հարիւրապետն...:»,